ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄ

2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 26-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ (ԶՖԳ) ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՄԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ (ՊՐՈՊԱՐԿՈ) ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 28-Ի ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան 17 մարտի 2026 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով.

դատավորներ՝ Արման Դիլանյանի (նախագահող),
Արտակ Զեյնալյանի,
Դավիթ Խաչատուրյանի,
Երվանդ Խունդկարյանի,
Հովակիմ Հովակիմյանի (զեկուցող),
Սեդա Սաֆարյանի,
Արթուր Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Կառավարության ներկայացուցիչ՝ Էկոնոմիկայի նախարար
Գևորգ Պապոյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2025 թվականի մայիսի 26-ին ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ֆրանսիայի Հանրապետության կառավարության միջև «Հայաստանում Զարգացման Ֆրանսիական Գործակալության (ԶՖԳ) և Տնտեսական համագործակցության խթանման և մասնակցության ընկերության (ՊՐՈՊԱՐԿՈ) հիմնադրման և գործունեության մասին» 2018 թվականի մայիսի 28-ի համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» արձանագրությունում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2026 թվականի հունվարի 15-ի N 57-Ա որոշմամբ հավանություն է տվել «2025 թվականի մայիսի 26-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության և Ֆրանսիայի Հանրապետության կառավարության միջև «Հայաստանում Զարգացման Ֆրանսիական Գործակալության (ԶՖԳ) և Տնտեսական համագործակցության խթանման և մասնակցության ընկերության (ՊՐՈՊԱՐԿՈ) հիմնադրման և գործունեության մասին» 2018 թվականի մայիսի 28-ի համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» արձանագրությունը վավերացնելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ Կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է նշված արձանագրությամբ ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու նպատակով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2026 թվականի հունվարի 16-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով վերոնշյալ արձանագրությունը, հետազոտելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ֆրանսիայի Հանրապետության կառավարության միջև «Հայաստանում Զարգացման ֆրանսիական գործակալության (ԶՖԳ) և Տնտեսական համագործակցության խթանման և մասնակցության ընկերության (Պրոպարկո) հիմնադրման և գործունեության մասին» համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2018 թվականի մայիսի 28-ին

Երևան քաղաքում՝ նպատակ ունենալով հստակեցնելու ԶՖԳ-ի և ՊՐՈՊԱՐԿՈ-ի՝ Հայաստանի Հանրապետությունում հիմնադրման, ինչպես նաև դրանց գործունեության նկատմամբ կիրառելի կանոնները, մասնավորապես՝ իրավաբանական, հարկային, ֆինանսական կամ այլ պայմանները՝ Համաձայնագրի, Կողմերի պետությունների օրենսդրության և համապատասխան միջազգային պարտավորությունների համաձայն (Սահմանադրական դատարանի 2021 թվականի դեկտեմբերի 10-ի ՍԴՈ-1620 որոշում, կետ 1):

2. 2025 թվականի մայիսի 26-ին Երևանում ստորագրվել է ««Հայաստանում Զարգացման Ֆրանսիական Գործակալության (ԶՖԳ) և Տնտեսական համագործակցության խթանման և մասնակցության ընկերության (ՊՐՈՊԱՐԿՈ) հիմնադրման և գործունեության մասին» համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» արձանագրությունը (այսուհետ՝ Արձանագրություն)՝ ԶՖԳ-ի և ՊՐՈՊԱՐԿՈ-ի գործունեության ընդլայնման և Հայաստանի տնտեսական ոլորտի բարեփոխումների գործընթացում ֆրանսիական կողմից ավելի լայն ներգրավվածության ապահովման նպատակով:

3. Արձանագրության նպատակն է տարածել Համաձայնագրի կիրառումը «Էքսպերտիզ ֆրանս» գործակալության վրա՝ որպես ԶՖԳ խմբի անդամի (հոդված 1):

4. Արձանագրությունը կցված է Համաձայնագրին և կազմում է նրա անբաժանելի մասը (հոդված 4):

5. Արձանագրությամբ Հայաստանի Հանրապետությունը ստանձնում է հետևյալ պարտավորությունները.

5.1. համաձայնել, որ Համաձայնագիրը փոփոխվի այնպես, որ Համաձայնագրում ԶՖԳ-ին և ՊՐՈՊԱՐԿՈ-ին կատարվող բոլոր հղումներն ընդգրկեն նաև «Էքսպերտիզ ֆրանս» գործակալությունը (հոդված 2, կետ 1),

5.2. համաձայնել, որ Համաձայնագրի 7-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն

ՊՐՈՊԱՐԿՈ-ին տրամադրված այն հնարավորությունները, որոնք նրան թույլ են տալիս դիմելու առանձին ներկայացուցչություն բացելու խնդրանքով, տրվեն նաև «Էքսպերտիզ ֆրանս» գործակալությանը (հոդված 2, կետ 2),

5.3. Համաձայնագրի համաձայն՝ Հայաստանի տարածքում ԶՖԳ-ին և ՊՐՈՊԱՐԿՈ-ին հայկական կողմի կողմից վերապահված առավելությունները և արտոնությունները տարածել «Էքսպերտիզ ֆրանս» գործակալության վրա՝ որպես ԶՖԳ խմբի անդամի, ինչպես նաև նրա վարձած էքսպատրիանտների (գործուղված մասնագետների) վրա՝ այնքանով, որքանով դա անհրաժեշտ է առաքելությունների իրականացման համար (հոդված 3):

6. Արձանագրությունը կարող է ցանկացած ժամանակ փոփոխվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ: Այդ փոփոխությունները ձևակերպվում են արձանագրություններով (հոդված 5, կետ 2):

7. Արձանագրության մեկնաբանման և կիրառման շուրջ ծագած բոլոր տարաձայնությունները լուծվում են բարեկամաբար՝ Կողմերի միջև խորհրդակցությունների և բանակցությունների միջոցով (հոդված 5, կետ 3):

8. Արձանագրությունը կնքվում է անորոշ ժամկետով: Կողմերից յուրաքանչյուրը կարող է ցանկացած պահի դադարեցնել դրա գործողությունը՝ վեց ամիս առաջ այդ մասին գրավոր ծանուցելով մյուս Կողմին: Այս ժամկետը հաշվարկվում է նշված ծանուցումը մյուս Կողմի ստանալու օրվանից: Արձանագրության գործողության դադարեցումը չի ազդում ընթացքում գտնվող ծրագրերի և պայմանավորվածությունների առնչությամբ Համաձայնագրից բխող՝ Կողմերի իրավունքների և պարտականությունների վրա (հոդված 5, կետ 4):

9. Արձանագրությունն ուժի մեջ մտնելու պահից կիրառվում է ընթացքում գտնվող ծրագրերի, պայմանավորվածությունների և ցանկացած համագործակցության նկատմամբ (հոդված 5, կետ 5):

10. Սահմանադրական դատարանը գտնում է, որ Արձանագրությամբ Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Սահմանադրության 13-րդ հոդվածով ամրագրված՝ միջազգային իրավունքի հիման վրա՝ բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերությունների հաստատմանն ուղղված արտաքին քաղաքականության իրականացման նպատակներին:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. 2025 թվականի մայիսի 26-ին ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ֆրանսիայի Հանրապետության կառավարության միջև «Հայաստանում Զարգացման Ֆրանսիական Գործակալության (ԶՖԳ) և Տնտեսական համագործակցության խթանման և մասնակցության ընկերության (ՊՐՈՊԱՐԿՈ) հիմնադրման և գործունեության մասին» 2018 թվականի մայիսի 28-ի համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» արձանագրությունում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

17 մարտի 2026 թվականի
ՍԴՈ-1821